ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1518-21 առ "14" 06 2021թ.

Ձեր № _____ առ "___" _____ 2021թ.

«ՎԻԸՆԴԵՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի
տնօրեն՝ պրն. Վ.Գրիգորյանին
E-mail: vrezh21@internet.am

{№01/149 առ 26.05.2021թ. պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ}

Հարգելի պարոն Գրիգորյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) կարիքների համար «լամինատ և տեգ» ձեռք բերման նպատակով ս/թ մայիսի 04-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-90/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, «ՎԻԸՆԴԵՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2021թ. մայիսի 26-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-90/21-01/149, որի հիման վրա Ձեր կազմակերպությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված ժամկետում մատակարարել 345 մ^2 լամինատ՝ 1 154 715 (մեկ միլիոն հարյուր հիսուն չորս հազար յոթ հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

«ՎԻԸՆԴԵՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում մատակարարվել է լամինատ Պայմանագրի պահանջների խախտմամբ՝ հիմք ընդունելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի տեխնիկական վերահսկողության բաժնի կողմից տրամադրված թիվ 06.21-125 առ 03.06.2021թ. ակտը:

Համաձայն Պայմանագրի՝

- 2.4.1 կետի «Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով»;
- 2.4.2 կետի «Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետի համաձայն»;
- 2.4.4 կետի «Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր»;

Ելնելով վերոգրյալից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ՎԻԸՆԴԵՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ 2021թ. մայիսի 26-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-90/21-01/149 պայմանագիրը, և տեղեկացնում ենք, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև Պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Առդիր՝ թիվ 06.21-125 առ 03.06.2021թ. ակտի պատճեն – 1 էջ:

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
“ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ”

ԱԿՏ № 06.27-125 առ “03” 06 2021 թ.
Մուտքային վերահսկողության

էջեր 1

Պայմանագիր 01/149 առ 26.05.2021թ.

Հարկային-հաշիվ Ա №1728521528 առ 26.05.2021թ.

Մատակարար «ՎԻԸՆԴԵՄ» ՍՊԸ

1. Մուտքագրվող ապրանքների ցանկ

№ հ/հ	Միավոր արտադրանքի անվանումը	Արտադրանքի մակնիշավորում	Գործարանային համարը ապրանքի/խմբաքանակը	Դասակարգումը ըստ EN 13329	Քանակը (մետր²)	Արտադրամաս
1	2	3	4	5	6	7
1	Լամինատե հատակներ	1221× 201× 8 մմ (բաց շագանակագույն)	2003-3	AC 4 (32 դաս)	345	ՇՎԱ

2. Մուտքային ստուգման արդյունքում հայտնաբերվել են՝

ա) Տարան և փաթեթվածքի վիճակը – համապատասխանում է՝ առկա է գործարանային փաթեթավորում

բ) Ապրանքանիշը – առկա է

գ) Ապրանքների լրակազմությունը – համապատասխանում է հարկային հաշվին Ա №1728521528 առ 26.05.2021թ.

դ) Ապրանքների արտաքին զննում – դեֆորմացիաներ և արատներ չեն հայտնաբերվել

ե) Այլ ստուգումներ - չափսերը և գույնը համապատասխանում են պայմագրի տեխնիկական բնութագրին

2.1. Անհամապատասխանություններ – 34 դասի (AC6) փոխարեն մատակարարվել է 32 (AC4) դասի լամինատե հատակներ

3. Եզրակացություն – լամինատե հատակները չեն համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրի պայմաններին:

ՄԳՀ նախագահ՝

Հանձնաժողովի անդամներ՝

«ՀԱԷԿ» ՓԲԸ ՏՎԲ ЗАО "ААЭК" ОТК

ՏՎԲ դրոշմակնիք 03, 06 2021թ.

ՏՎԲ պետ _____ Համբարձումյան

ՏՎԲ 1-ին կարգի ճարտարագետ _____ Գրիգորյան

ՇՎԱ պետ _____ Մարոյան